Մամլո հաղորդագրություն

Հայաստանի երեք մարզերում՝ Լոռիում, Տավուշում և Գեղարքունիքում իրականացվում է «Փոքր մասշտաբի վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության միջոցառումներ հանրային շենքերում և պիլոտային մեկուսացում տնային տնտեսությունների մակարդակում» ծրագիրը: Էներգախնայողության աջակցման հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում՝ նշված մարզերի էներգետիկ տեսանկյունից աղքատ համայնքներում, հատկապես ցածր եկամուտ ունեցող խոցելի տնային տնտեսություններում և համայնքային շենքերում, կներդրվեն էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի միջոցառումներ՝ փոքր մասշտաբի ինքնավար արևային ՖՎ կայանների տեղադրում, պատուհանների փոխարինում, տանիքների ջերմամեկուսացում, արտաքին դռների փոխարինում և այլն: Հայաստանի մայրաքաղաքից հեռու բնակավայրերի համար կարևոր նշանակություն ունեցող դրամաշնորհային այս ծրագիրն իրականցվում է «ԵՄ-ն հանուն էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի» ԵՄ գործողության և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Բնական պաշարների կառավարում և էկոհամակարգային ծառայությունների պահպանություն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար» (ԷԿՈսերվ) ծրագրի շրջանակներում:

Արդեն ընտրվել են Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի միամայնքային կարևոր նշանակուության հիսուն այն շենքերը, որտեղ կտեղադրվեն փոքր ՖՎ կայաններ (մինչև 5 կՎտ), ինչպես նաև կիրականացվեն ջերմամեկուսացման միջոցառումներ: Ընտրությունը կատարելիս առաջնահերթությունը տրվել է կանանց և երիտասարդների համար հատուկ նշանակություն ունեցող հանրային ենթակառուցվածքներին, ինչպիսիք են մանկապարտեզը, առողջապահական, մշակութային, սպորտային կենտրոնները և այլն: Ընտրության ժամանակ կարևորվել է նաև ուղիղ շահառուների քանակը, խոցելի խմբերի ներգրավվածությունը, այդ թվում՝ Արցախից տեղահանված շահառուների քանակը:Ծրագրի շրջանակներում վերոնշյալ մարզերի (գյուղական համայնքների) 10 տնային տնտեսություններում կիրականացվեն ջերմամեկուսացման միջոցառումներ, որոնց արդյունքում կկրճատվի վառելիքի օգտագործման ծավալը, կնվազի կենցաղային ծանրաբեռնվածությունը, կբարելավվի էներգաարդյունավետությունը, ինչը դրական ազդեցություն կունենա շրջակա միջավայրի պահպանության ու կայունության, ջերմոցային գազերի արտանետման կրճատման վրա:

Էնեգախնայողության աջակցման հիմնադրամ

Էրեբունի Պլազա, #414 գրասենյակ

Երևան 0010, Հայաստան

info@esfarmenia.org
www.esfarmenia.org

EU4Energy Efficiency and Renewable Energy in Armenian Communities